



ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ



ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ Թիվ 3(28), 30 ապրիլ, 2020թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՅԱՍԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ 102-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ



Ապրիլի 16-ը Հայաստանի Հանրապետության ոստիկանության օրն է:

Տոնի կապակցությամբ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Կառավարության նիստում շնորհավորեց ոստիկանության ծառայողներին:

Կառավարության անդամները մեկ րոպե լռությամբ հարգեցին ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված ոստիկանների հիշատակը:

Նույն օրը ոստիկանության պետն ու կոլեգիայի անդամները ծաղիկներ խոնարհեցին Հայաստանի Առաջին հանրապետության ներքին գործերի առաջին նախարար Արամ Մանուկյանի կիսանդրուն և Իրավակարգի զինվորի հուշարձանին:

Ոստիկանության օրվա առթիվ նախագահ Արմեն Սարգսյանը տեսակապով ողջունեց և շնորհավորեց ոստիկանության ղեկավարությանն ու կոլեգիայի անդամներին:

Ոստիկանության պետ Արման Սարգսյանը շնորհակալություն հայտնեց հանրապետության Նախագահին՝ ջերմ խոսքերի համար, և

հավաստիացրեց, որ ոստիկանության ղեկավարությունն անուճ է ամեն ինչ՝ ավելի ուժեղ ու կայացած կառույց դառնալու համար:

Ոստիկանությունում տեղի ունեցավ նաև պարզևատրման հանդիսավոր արարողություն:

Ոստիկանության պետ Արման Սարգսյանը, ողջունելով ներկաներին, շնորհավորեց Ոստիկանության օրվա կապակցությամբ: Նա նշեց, որ ոստիկանությունը բազմաֆունկցիոնալ կառույց է, և առանձնահատուկ շնորհակալություն հայտնեց ոստիկանության օպերատիվ ու արտաքին ծառայությունների աշխատակիցներին, ոստիկանության զորքերին, քաղաքացիներին ծառայություն մատուցող բոլոր ստորաբաժանումների ծառայողներին, օժանդակող վարչությունների աշխատակիցներին:

Արման Սարգսյանը շեշտեց, որ արտակարգ դրության պայմաններում հատկապես ոստիկանության կրտսեր ու միջին խմբի ծառայողները և բժիշկներն են կանգնած համավարակի դեմ պայքարի առաջնագծում:

ՄԵՐ ՉՍՊԻԱՅՈՂ ՎԵՐՔԸ

Ամփստելի փաստ է, որ, սկսած 1915թ. ապրիլի 24-ից թուրքական (Օսմանյան) կառավարության կողմից պետական մակարդակով իրականացվել է հայ ժողովրդի զանգվածային բնաջնջում և կոտորած իր իսկ հայրենիքում:

Թուրքական կառավարության իրականացրած Հայոց ցեղասպանության փաստը հիմնավորվել, ճանաչվել ու հաստատվել է ականատեսների վկայություններով, օրենքներով, բանաձևերով և բազմաթիվ նահանգների ու միջազգային հեղինակավոր կազմակերպությունների որոշումներով:

Ամեն ցեղասպանություն իր յուրահատկությունն ունի: Հայոց ցեղասպանությունն առանձնանում է դրան առնչվող ճշմարտությունները թաքցնելու և պատմականությունը հերքելու երկարատև ջանքերով: Հայոց ցեղասպանության հերքումն այդ ծրագրի անբաժան մասն է կազմել: Սեփական հայ-

րենիքից հայ ժողովրդի արտաքսումը դեպի Սիրիայի անապատներ, նրանց ոչնչացումը կամ ճանապարհին, կամ վերջնական հանգրվաններում իրականացվել է հայերին վերաբնակեցնելու որոշման քողի տակ: Ամբողջ գործընթացը, ըստ էության, կազմակերպվել ու իրականացվել է՝ ջանալով վերաբնակեցումը ներկայացնել որպես իրողություն:

Թեև երեք տասնյակից ավել երկրներ և միջազգային կազմակերպություններ արդեն բարձր մակարդակով ճանաչել են Հայոց ցեղասպանությունը որպես պատմական իրողություն, սակայն թուրքիայի Հանրապետության ներկայիս ղեկավարությունը շարունակում է նույն ժխտողական քաղաքականությունը և երբեմն փորձում փաստել Առաջին համաշխարհային պատերազմի իրողությունները, նույնիսկ՝ հայերի հարձակումը թուրքերի վրա և այլն: ▶ 2

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՅԱՍԱԼԻՐԻ ՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԸ

Հարգելի՛ գործընկերներ, վետերաններ, սիրելի՛ սովորողներ



ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ղեկավարության և իմ անունից շնորհավորում եմ մեր մասնագիտական տոնի՝ Ոստիկանության օրվա առթիվ: Ոստիկանության առաքելությունն արժանապատիվ ծառայությունն է մարդուն, քաղաքացուն, ժողովրդին, հասարակությանը և հայրենիքին: Մեր կոչումն անձնագրի, անզիջում պայքարն է հայ շինարար մարդու վաստակը սովորող ամեն տեսակի իրավախախտումների և հանցավորության դեմ, մեր երդումը՝ անխախտ, մեր բազուկը՝ պինդ, միտքը՝ պայծառ, մեր սիրտն անաչառ է առօրյա կյանքում, ուսման, գիտական հետազոտությունների ընթացքում և ծառայողական պարտականությունները կատարելիս: Հայ ոստիկանն արդեն 102 տարի պատվով է կատարում իր պարտքը, հաճախ՝ առողջության և կյանքի գնով: Սիրելի՛ սովորողներ, ձեզ բախտ է վիճակվել դառնալու նոր Հայաստանի, ժողովրդի մասը կազմող ոստիկանության անբասիր ծառայողներ, մենք ժառանգն ենք խիզախումներով, նաև կորուստներով լի պատմության, և այսօր, անցյալի լավագույն ավանդույթներն ունենալով մեր զինանոցում, պետք է նոր մտածողությամբ, նոր գիտելիքներով, ամուր կամքով ու նպատակասլացությամբ նվիրվենք Հայաստան երկրի կայացմանը, որտեղ մեր երեխաներն ապրելու են անհոգ, երջանիկ, որտեղ մեր ընտանիքներն ամեն օր զգալու են օրենքի գերիշխանության, արդարության և իրենց ապահովության պայմաններում սեփական աշխատանքով բարգավաճման անխուսափելիությունը: Կրկին շնորհավորում եմ մեզ և մեր ընտանիքներին՝ Հայաստանի ոստիկանության 102-ամյա հորեյանի առթիվ, մաղթում եմ անսասան հավատ, անմնացորդ նվիրում և հաստատական ընթացք մեր նպատակների իրականացման ճանապարհին, հաջողություններ աշխատանքում և ուսման մեջ: Եվ չմոռանա՞ք մեր կարգախոսը՝ հիմնավոր գիտելիքով դեպի արժանապատիվ ծառայություն:

Շնորհավոր:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մուշեղ Բաբայան

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ՝ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Ապրիլի 16-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի միստերի դահլիճում պարզևատրման արարողություն էր: Ոստիկանության օրվա առթիվ իրավակարգի ամրապնդման, հասարակական կարգի պահպանության գործում ներդրած ավանդի և ծառայության ընթացքում ցուցաբերած նվիրումի համար խրախուսվեցին ոստիկանության կրթահամալիրի մի խումբ ծառայողներ: Պարգևները հանձնեց ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մուշեղ Բաբայանը:

Ստորև՝ խրախուսման արժանացած ծառայակիցների անունները.

* ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի օպերատիվ- հետախուզական գործունեության և քրեագիտության ամբիոնի դոցենտ, ոստիկանության փոխգնդապետ Բենիամին Զավենի Ալեքսանյանը՝ «Ոստիկանության գնդապետ» կոչումով,

* ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի լեզուների ամբիոնի դոցենտ, ոստիկանության գնդապետ Ռոզա Լևոնի Մուսաթյանը՝ «Օրենքի պատվար» մեդալով,

* ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի տեղակալ, ինքը և տնտեսական բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Գնել Սաշայի Առաքելյանը՝ ՀՀ ոստիկանության պատվոգրով, ▶ 2

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ՝ ԶՅ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԿԱ ԱՌԹԻՎ



1 ◀ *ԶՅ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական դատավարության ամբիոնի դոցենտ, ոստիկանության փոխգնդապետ Զասմիկ Սամվելի Սմբատյանը՝ «Ոստիկանությունում գերազանց ծառայության համար» կրծքանշանով,

* ԶՅ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի ավագ դասախոս, ոստիկանության փոխգնդապետ Զոհիպիսեն Սիերի խաչատրյանը՝ ԶՅ արդարադատության նախարարության «Շնորհակալագիր»-ով:

ԶՅ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Տ.Եսայանի՝ 15.04.2020, թիվ 1093-Ա հրամանով հայտարարվել է «Շնորհակալություն».

* ԶՅ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի մագիստրատուրայի բաժանմունքի պետ, ոստիկանության փոխգնդապետ Ռուզաննա Ներսեսի Թեմուրյանին,

* ԶՅ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնի հատուկ պատրաստակալության կրթաճյուղի ավագ դասախոս, ոստիկանության փոխգնդապետ Նահրա Սամբրեի Նազարյանին,

* ԶՅ ոստիկանության կրթահամալիրի ծառայության բաժնի կուրսի պետ, ոստիկանության մայոր Արմեն Կիմիկի Անտոնյանին,

* ԶՅ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի ոստիկանական միջին մասնագիտական կրթության ֆակուլտետի ավագ տեսուչ, ոստիկանության մայոր Չերենցկայա Ելենա Վլադիմիրովնային:

Ոստիկանության գեներալ-մայոր Մ.Բաբայանը շնորհավորեց պարգևատրվածներին՝ մաղթելով շարունակական վերելքներ ու աշխատանքային նորանոր ձեռքբերումներ:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԶԵՌԱՎԱՐ ՆԻՍ

Սույն թվականի ապրիլի 6-ին հեռավար կարգով տեղի ունեցավ ԶՅ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի 2020 թվականի 3-րդ նիստը: Օրակարգի հարցերի քննարկման արդյունքում գիտական խորհուրդը որոշեց փոփոխություններ և լրացումներ կատարել դիպլոմային աշխատանքի և մագիստրոսական թեզի ընտրության, պատրաստման և պաշտպանության կարգում, ԶՅ ոստիկանության կրթահամալիրի սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատման կանոնակարգում, ԶՅ ոստիկանության կրթահամալիրից սովորողների ազատման ուսումնառության ընդհատման, վերականգման և տեղափոխման կարգում, ԶՅ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայում բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգում, ԶՅ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի ոստիկանական միջին մասնագիտական կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգում, ԶՅ ոստիկանության կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատանքների նորմավորման կարգում, ԶՅ ոստիկանության կրթահամալիրի ռազմավարական պլանում, ԶՅ ոստիկանության կրթահամալիրի ռազմավարական պլանի գործողությունների կատարման ժամանակացույցում, հաստատեց



ԶՅ ոստիկանության կրթահամալիրի մարդկային ռեսուրսների կառավարման և աշխատանքների պլանավորման հայեցակարգը, ԶՅ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդին կից՝ ստրատեգիական պլանավորման և որակի ապահովման հանձնաժողովի նոր կազմը, ինչպես նաև որոշեց միջոցառել ԶՅ ոստիկանության պետին կրթահամալիրի 3 նախկին սովորողների ուսանողական իրավունքները վերականգնելու համար:

ԶՅ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 102 ՏԱՐԵԿԱՆ Է

ԶՅ ոստիկանությունը 102 տարեկան է: Ծննդյան օրը պատեհ առիթ է արժևորելու անցած ուղին, անդրադառնալու կատարված աշխատանքներին ու հետագա անելիքներին:

Եթե բանակը պաշտպանում է դրսի վտանգներից, ապա ԶՅ ոստիկանության առաքելությունը մեր հասարակության անվտանգ ու խաղաղ համակեցության ապահովումն է, որտեղ ծառայում են բազմաթիվ հմուտ և պատասխանատու հրամանատարներ, լավ կրթված ու բանիմաց սպաներ:

Բոլորս էլ կաննում ենք մեր շուրջը տեսնել բարեկիրք և արհեստավարժ ոստիկանի, ի դեմս նրա՝ տեսնել ոչ թե մեզ պատժողի, այլ մեզ պաշտպանողի, մեր մշտաբթուն և մշտապես օգնության հասնող բարեկամի, չէ որ նրանք, օրենքը պաշտպանելով, մեզ են պաշտպանում: Այսօր քայլ առ քայլ մենք թոթափում ենք տասնամյակներով ձևավորված կարծրատիպերը ոստիկանի մասին: Երբ մեր կողմից նրանք զգում են պահանջկոտ վերաբերմունք, բայց նաև մարդկային ջերմություն, դա նրանց ավելի է պարտավորեցնում՝ կատարելագործելու իրենց մարդկային և մասնագիտական որակները: Նրանց մեջ շատ են այնպիսիք, որոնց ամուսն ու գործն ուղենիչ են բոլոր, հատկապես՝ երիտասարդ ոստիկանի համար:

Առանց ոստիկանության չկա պետություն, ինչպես և առանց պետության չկա ոստիկանություն:

Մասնագիտական պատրաստվածության խնդիրը միշտ առաջնային է եղել ոստիկանության համար: Դեռևս 1922 թվականի նոյեմբերի 12-ին միլիցիայի 1-ին դասընթացները տվեցին 1-ին շրջանավարտները, և այդ օրը տևական ժամանակ ընդունված էր որպես հայկական միլիցիայի տոն:


1923 թվականին դասընթացների հիմքի վրա բացվում է միլիցիայի հրամկազմի պատրաստման դպրոցը, իսկ 1926 թվականի աշնանը՝ տեղամասային միլիցիայի հրամկազմի պատրաստման միամյա դպրոցը:

1954 թվականին միլիցիայի Երևանի դպրոցը փակվում, ապա վերաբացվում է 1966 թվականին՝ որպես ՍՍՀՄ ԼՂԿ միլիցիայի Երևանի հատուկ դպրոց, որը գործում է մինչև 2000 թվականը:

Նոր ժամանակների շունչն զգալի էր բոլոր ոլորտներում: Որոշ չափով սկսում է կարևորվել հասարակական կարծիքը, և այդ տարիներին քայլեր էին արվում նաև միլիցիայի ծառայողի նոր կերպարի ձևավորման ուղղությամբ: Զանդիպուրներ էին կազմակերպվում դպրոցներում, բուհերում, աշխատանքային կոլեկտիվներում: Զանդային ընկալման մեջ հյուսվում է ժողովրդական միլիցիոների կերպարը, նույնիսկ՝ բանահյուսական մակարդակով: Զայաստանում, օրինակ, պատմություններ էին շրջում միլիցիա Անդրեի անմիջական, նույնիսկ կուպիտ, բայց արդարամիտ մարդու, ժողովրդի ծոցից դուրս եկած միլիցիայի մասին:

Զայաստանի ներքին գործերի մարմինները բավական արդյունավետ էին պայքարում և՛ ավանդական հանցատեսակների, և՛ հանցավորության նոր մարտահրավերների դեմ: Զայաստանի միլիցիայի կադրային բազան լավագույններից էր երկրում, իսկ Զայաստանը օպերատիվ իրավիճակի վերահսկելիության և հանցավորության հակազդման առումով առաջատար դիրքերում էր Սովետական Միությունում, բայց խնդիրն այլ էր. Սովետական Միությունն այլևս չէր դիմանում ժամանակի քննությանը: 80-ականների վերջին Զայաստանը սովետական մյուս հանրապետությունների պես կանգնած էր լրջագույն ցնցումների և արմատական փոփոխությունների շեմին: Այդ շրջանում մեզ համար, ի թիվս գաղափարախոսական, սոցիալական, տնտեսական բարդ հիմնախնդիրների, առաջնային էին դառնալու ազգային խնդիրները: Եվ այդ ճակատագրական ժամանակներում պատմությունը կրկին անկյունաքարային դերակատարում էր վերապահելու ներքին գործերի մարմիններին:

Տասնամյակների հեռվից հրաշք է թվում հայկական միլիցիայի այդ տարիների սխրանքը. ▶ 3



1 ◀ 1915թ. ապրիլի 24-ին Ստամբուլում անհիմն ձերբակալվեցին 200-ից ավելի հայ մտավորականներ և տարբեր ոլորտի բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնց ուղարկեցին սիրիական անապատներում հատուկ ստեղծված մահվան ճամբարներում (Մեթքենե, Դեր Զոր, Ռաբբա և այլն) մեռնելու: Դրան հետևեց հայության սովորական ճամբարները, որտեղ կազմակերպված կերպով սպանում էին հայերին անենադաժան ձևերով, մի մասն էլ սովից ու ծարավից էր մահանում գաղթի ճանապարհին:

Այս էջը հավերժ կմնա հայ ազգի պատմության մեջ: Ցեղասպանության պատճառով հարյուրավոր երեխաներ լույս աշխարհի չէին, հարյուրավոր մարդիկ մեռան գաղթի ճանապարհին, հազարավորները թողեցին իրենց հայրենիքն ու գաղթեցին օտար երկրներ, հազարավոր աչքեր արցունքով ողողվեցին:

ՄԵՐ ԶՄՊԻԱՅՈՂ ՎԵՐՔԸ

Ոչնչացվեց մի ամբողջ քաղաքակրթություն՝ հայ ժողովրդի զգալի մասը:

Այդ օրից անցել է 105 տարի, բայց ցավը մինչև այսօր էլ չի մեղմացել ու էլ ավելի է խորացել:

Արդի Թուրքիայի կառավարողները և թուրք ներկա սերունդը, որոնք մեզ չունեն 1915 թվականի ազգասպան ոճրի մեջ, պետք է ոչ թե ջանան թաքցնել իրենց նախորդների բարբարոսությունը, այլ մաքրեն նրանց կողմից թուրքական պատմության ճակատին խարանած մուրը, պաշտոնապես ընդունեն և հրապարակայնորեն դատապարտեն հայ ժողովրդի նկատմամբ երիտթուրքերի և քենապականների ոճրագործության փաստը մի պարզ պատճառով, որ պատմության մեջ որևէ ժողովրդի դեմ երբևէ չկրկնվի նման ոճրագործությունը:

Այս դաժան իրադարձությանը պայմանավորված՝ ապրիլի 24-ը խորհրդանշում է Զայոց ցեղասպանության հիշատակի օրը:

Ամեն տարի աշխարհի բազմաթիվ երկրներից հայության հոծ բազմություն իր հիշատակի տուրքն է մատուցում այցելելով Զայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող Ծիծեռնակաբերդի հուշահամալիր:

Ցավոք, այս տարի աշխարհում մոլեգնած համաճարակի պատճառով 105-րդ տարելիցի հիշատակի օրն այդ բազմաազարանոց երթը տեղի չի ունենա, սակայն բոլորս պետք է հիշենք և հարգանքի տուրք մատուցենք Զայոց ցեղասպանության հիշատակի օրվա առթիվ յուրովի՝ օգտագործելով համացանցային տիրույթը և այն հնարավոր բոլոր միջոցները, որը մեկ անգամ ևս կհիշեցնի ոճրագործների հետնորդներին, որ պետք է հաշվի նստել այդ անժխտելի իրողության հետ և արժանի կերպով փոխհատուցել:

Տիգրան խաչատրյան
ոստիկանության ավագ լեյտենանտ

ՀՀ ՈՍՏԻՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ 102 ՏԱՐԵԿԱՆ Է

2 ◀ սահմանափակ թվակազմով, տեխնիկական սուղ միջոցներով, առանց պետականաշինության փորձի, նվիրյալների այդ սերունդը ոչ միայն կատարեց իր մասնագիտական ու քաղաքական պարտքը, այլև կազմավորեց ազգային իրավապահ կառույց, որի հիմքում անկախ պետականության կերտման ինքնագիտակցումն էր, իսկ տեսլականը՝ ձևավորել այնպիսի արհեստավարժ համակարգ, որը կկարողանար դիմակայել նոր ժամանակների մարտահրավերներին:

1992 թվականից Հայաստանն անդամակցում է Ինտերպոլին, ընդլայնվում են հանցավորության դեմ համատեղ պայքարի հորիզոններն ու աճում արդյունավետության բարձրացման հնարավորությունները, միևնույն ժամանակ, ԱՊՀ շրջանակներում խորանում է համագործակցությունն ավանդական գործընկերների՝ ՌԴ-ի և Սովետական Միության նախկին հանրապետությունների հետ: Գործնական հարաբերություններ են հաստատվում Ֆրանսիայի, Իրանի, Եգիպտոսի, Սիրիայի, Լեհաստանի, Հունաստանի, ԱՄՆ-ի և մի շարք այլ երկրների ոստիկանական կառույցների՝ Եվրոպայի խորհրդի, Միավորված ազգերի կազմակերպության, ԵԱՀԿ-ի հետ, ինչը փաստում է Հայաստան պետության տեղի ու դերի վերջնական ամրագրումն աշխարհի երկրների շարքում և նոր հեռանկարներ բացում ներքին գործերի մարմինների հետագա կատարելագործման ու հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման համար:

Պատվով անցնելով պատերազմի և հանցավորությունը զսպելու ծանրագույն շրջանը, կատարելագործելով պետականաշինության կառույցի վերակազմավորման իր պարտքը, աշխարհի իրավապահ կառույցների շարքում գտնելով և ամրագրելով իր տեղը Հայաստանի ներքին գործերի նախարարությունն այլևս ներկայանում էր որպես իրավապահ կառույց, որը պատրաստ էր բոլոր ուժերն ու կարողությունները տրամադրելու իր ուղղակի գործառնությունների իրականացմանը: Առանց ոստիկանություն չկա պետություն, իսկ երբ պետությունը պատրաստ է կառավարման բոլոր ոլորտներում կատարել իր առաքելությունը, ոստիկանությունը վերադառնում է անմիջական խնդիրների լուծմանը:

2001 թվականի ապրիլի 16-ին ընդունվում է ոստիկանության մասին Հայաստանի Հանրապետության օրենքը, որով ներքին գործերի նախարարությունը վերակազմավորվում է ՀՀ ոստիկանության: Հաջորդում են ոստիկանությունում ծառայության մասին, ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին, ՀՀ քաղաքացիության, օպերատիվ հետախուզական գործունեության մասին և մի շարք այլ օրենքներ, փաստաթղթեր, հրամանագրեր, որոշումներ, հրամաններ, ձևավորվում է օրենսդրական դաշտը, որի շրջանակներում ոստիկանությունն իրականացնելու էր իր գործունեությունը: Ոստիկանության համար առաջնահերթություն է դառնում շարունակական բարեփոխման գործընթացը, հասարակական զարգացմանը նույնիսկ համընթաց գնալն այլևս նշանակում է հետ մնալ այդ ընթացքից: Ոստիկանությունը պետք է միշտ մի քայլ առաջ լինի այդ զարգացումից. ոչ միայն կանխատեսելով և կիրառելով հանրային պահանջը, այլև հանրային հարաբերություններին տեսլական առաջադրելով ու նպաստելով դրա կենսագործմանը:

Ոստիկանության ակադեմիան վերակազմավորվում է կրթահամալիրի եռաստիճան կրթահամակարգով, որը բարձրակարգ կադրեր է ապահովում գործունեության բոլոր ոլորտների համար՝ օպերատիվ-ծառայողականից, մինչև գիտատեսչական:

Սկսում են գործել փորձաքրեագիտական ստորաբաժանումները՝ հագեցած ժամանակակից տեխնիկայով ու մասնագետներով: Շարք է մտնում տեղեկատվության փոխանակման ժամանակակից համակարգը, պրոֆեսիոնալ միջոցներով հագեցվում են օպերատիվ ծառայությունները: Ձևավորվում է համայնքային ոստիկանությունը, շարք են մտնում ոստիկանական տեղամասային հենակետեր, գործարկվում է դպրոցական տեսուչների ինստիտուտը: Հասարակական կարգի պահպանությունն են իրականացնում հրեշտակների գումարտակները:

Ծառայություն օրենքին ու ժողովրդին, ծառայություն անմնացորդ ու արհեստավարժ, ծառայություն՝ ժամանակի հրամայականին համընթաց, ծառայություն՝ մշտական ինքնակատարելագործման, բարեփոխման, լավագույն ավանդույթների պահպանման, նորի ամրագրման ու կենսագործման ճանապարհով:

Հայաստանի ոստիկանության կենսագրության բոլոր հերոսական ու ողբերգական շրջաններում, պայծառ ու խառնակ ժամանակների բոլոր ոլորտներում, սխրանքների ու անկումների բոլոր դրվագներում անփոխարինելի և անքննելի են եղել մասնագիտական պարտքի կատարումը հանցավորության դեմ պայքարում, անմնացորդ նվիրումը հասարակության ու քաղաքացու իրավունքների պաշտպանությանը, պետականության կրողի ու պահպանողի բարձր ինքնագիտակցումն ու գիտակցումը, որ առանց պետության չկա ոստիկանություն, բայց և առանց ոստիկանության չի կարող լինել պետություն:

Միրելի՛ հայ ոստիկան, անփորձանք և արդյունավետ ծառայություն Քեզ՝ հանուն մեր պետության, ժողովրդի անվտանգության, ներկայի և գալիքի:

«ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ ԱՆՑԿԱՑՆԵՆԸ ՄԵՁ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԺԱՄԱՆԱԿԸ»

(Ձրույց հոգեբանի հետ)

Բժշկական դիմակներ, զանազան ախտահանիչ միջոցներ, դատարկ փողոցներ ու ամեն օր անհամբեր ապաստիլ ահասարուռ լուրեր: Մարտի 16-ին COVID-19 համաճարակի պատճառով ՀՀ-ում հայտարարվեց արտակարգ դրություն: Իրավիճակն ամբողջ աշխարհում ընդունված է անվանել «Կարանտին» (quarantina), որն առաջին անգամ կիրառել են իտալացիները, երբ 14-րդ դարում համաճարակի պատճառով երկրում 40-օրյա արտակարգ դրություն հայտարարվեց:

Շուրջ մեկ ամիս է, ինչ պարետի համաճարակաճանով մարդիկ մեկուսացել են տանը և դուրս են գալիս միայն խիստ անհրաժեշտության դեպքում, իսկ ՀՀ ոստիկանության կրթահամալիրը բոլոր մյուս կրթական հաստատությունների պես անցել է հեռավար ուսուցմանը:

Մեկուսացման օրերին առջանց դասավանդման, սովորողների ժամանցի կազմակերպման, նրանց ծանծաղույթը հաղթահարելու մասին զրուցել ենք կրթահամալիրի քոլեջի հասարակագիտական առարկաների և հոգեբանության ամբիոնի դասախոս, հոգեբան, ոստիկանության կապիտան Մարիամ Կարապետյանի հետ:



«Ի՞նչ առանձնահատկություններ եք նկատում հեռավար դասավանդման մեջ:

-Կարծում եմ՝ սա նոր հարթակ է, որի միջոցով մեր մասնագետները հնարավորություն կունենան օգտագործել իրենց բարձր մասնագիտական որակները:

- ՀՀ ոստիկանության կրթահամալիրի սովորողներն օրուգիշեր ծառայում են՝ հորդորելով քաղաքացիներին մնալ տանը: Պրակտիկ խորհուրդներ, թե ինչպես կարելի է այս օրերին հաղորդակցվել քաղաքացիների հետ՝ հաշվի առնելով իրավիճակային առանձնահատկությունները:

-Քաղաքացիների հետ հաղորդակցման հմտությունների կիրառման առումով ցանկալի է օգտագործել արդյունավետ ունկնդրման մեթոդները, լինել բաց և անկողմնակալ, տառացիորեն լսել այն, ինչ ասվել է, ցուցաբերել ըմբռնում ու մեկնաբանել առաջադրանքը: Կրթահամալիրի սովորողներին խորհուրդ եմ տալիս վերհիշել մեր հաղորդակցման հմտությունների դասընթացները, որոնց ընթացքում ուսումնասիրել ենք հաղորդակցման հմտությունների առանձնահատկությունները:

Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ մարդկանց լարվածությունը հնարավոր է կոնֆլիկտային իրավիճակներ առաջացնի: Այս իրավիճակների լուծման լավագույն միջոցներից է ժամանակին դրանց չեզոքացնելը, իսկ հարթեցման լավագույն մեթոդներից է ինքնակարգավորման հմտությունների կիրառումը: Օրինակ՝ նախնական փուլում կարելի է կոնֆլիկտը հուզական մակարդակից բարձրացնել ինտելեկտուալ մակարդակի: Որպեսզի մեր հուզական լարված վիճակը հանդարտեցնենք, հարկավոր է ինքներս մեզ տանք հետևյալ պարզ հարցերը՝ որտե՞ղ եմ ես, ի՞նչ եմ անում, այս կերպ մեր ուշադրությունը շեղվում է մտածողության վրա և հուզական լարվածությունը

մարում է:

Հոգեկան հանգստության համար կարևոր է յուրաքանչյուր աշխատանք կատարել սիրով, հիշենք, որ մեր գործողություններն իրենցից ներկայացնում են էներգիայի փոխանակում. փորձենք արդյունավետ անցկացնել մեզ հատկացված ժամանակը և ընդունել յուրաքանչյուր որոշում պարզ մտքով և խաղաղ հոգով:

- Ըստ Ձեզ՝ ի՞նչն է ծանծաղույթի և անհարմարության պատճառ դառնում:

-Ուշ քնելը, առանց ռեժիմի պրելակերպը կարող է առաջացնել հոգնածություն, ծուլություն և հանգեցնել իմունային դիմադրության թուլացմանը:

Այս ամենը բնական է, քանի որ օրգանիզմը հարմարվում է իր համար անծանոթ՝ նոր ապրելակերպին. փոխվում է էներգիայի բաշխման գործընթացը, քանի որ մինչ այս մենք ունեինք օրվա կազմակերպման այլ տարբերակ, իսկ այսօր պետք է փոփոխություններ մտցնենք այդ գործընթացի մեջ:

- Պրակտիկ խորհուրդներ բոլորին և մասնավորապես՝ կրթահամալիրի սովորողներին, թե ինչպես կարելի է հաղթահարել ստեղծված անհարմարությունը և օգուտ քաղել մեկուսացումից՝ ճիշտ կազմակերպելով ժամանցը:

- Կրթահամալիրի սովորողներին խորհուրդ է տրվում օրը բաժանել ինտելեկտուալ և ֆիզիկական ակտիվության, որոնք իրենց հերթին բարելավում են հոգեկան առողջությունը, զբաղվեք նրանով, ինչով վաղուց ուզում էիք, և նախկինում որոշ պատճառներով չէր ստացվում: Կարողացե՛ք որակյալ գրականություն, համացանցի բազմաթիվ կայքերում առկա է մասնագիտական, գեղարվեստական (ինչպես էլեկտրոնային, այնպես էլ աուդիո տարբերակներով) գրականություն: Մտիվացրե՛ք ձեզ նպատակներով, բայց այդ նպատակների իրագործումն օրվա ընթացքում բաժանե՛ք

չափաբաժինների: Ոմանք կարող են մոտիվացվել կուրսային աշխատանք գրելով, ոմանք գիրք կարդալով, ոմանք նվագեցնեն ավելորդ քաշը ֆիզիկական վարժություններով՝ վազք, ակտիվ սպորտային վարժություններ և այլն: Վաղուց պայացուցված է, որ ֆիզիկական ակտիվությունը ոչ միայն առողջարար է, այլ նաև բարձրացնում է տրամադրությունը, ակտիվացնում, կրկնապատկում էներգիան:

Որպեսզի տրամադրության անկումները և տագնապայությունը չեզոքացնենք, ցանկալի է հնարավորինս քիչ ժամանակ տրամադրել լուրերի ուսումնասիրմանը: Իհարկե, բոլորս անսովոր իրավիճակում ենք և ունենք տեղեկատվություն ստանալու պահանջ, բայց այս գործընթացին կարող ենք հատկացնել օրվա ընթացքում, ասենք, 1 ժամ և օգտվենք այն լրատվամիջոցներից, որոնք գերծ են հուզական մեկնաբանություններից, օբյեկտիվ են ու պաշտոնական բնույթի: Մտածե՛ք դրական պատկերների մասին, կատարե՛ք վիզուալիզացիաներ: Հիմնականում մարդու հույզերը և մտքերն զբաղված են տեղեկատվությամբ, մենք անընդհատ մտածում ենք մեր լավ, վատ, ճիշտ կամ սխալ գործողությունների մասին: Այս ամենն ավելի է ուժեղացնում մեր տագնապայությունը: Նշեն, որ մեր ուղեղն ունի հզոր հնարավորություններ, մենք կարող ենք դրական մտքերի, պատկերների միջոցով բարելավել մեր հոգեբանական վիճակը:

-Ինչպիսի՞ արժեքներ կարելի է վերանայել այս օրերին:

-Կարծում եմ՝ այս իրավիճակը կնպաստի ավելի հանգիստ նայել մեզ շրջապատող իրականությանը, վերաիմաստավորել մեր արժեքները, ավելի շատ ուշադրություն դարձնել բնության գեղեցկությանը, շփվել ընտանիքի անդամների, երեխաների հետ, լեզուներ սովորել, գրականություն ուսումնասիրել, զբաղվել ինքնազարգացմամբ: Այս պայմաններում ցանկալի է ուշադրություն դարձնել տոլերանտության ցուցաբերմանը, ինչը նշանակում է համբերատարություն և հանդուրժողականություն այլ մարդու կենսակերպի, վարքի, հայացքների, սովորությունների նկատմամբ:

Հիշենք, որ մեզ շրջապատող մարդիկ նույնպես մեզ նման ապրում են նույն հույզերը և գտնվում են նույն իրավիճակում:

**Ձրույցը վարեց
ՀՀ ոստիկանության
կրթահամալիրի միջազգային
համագործակցության
և ՏՏ ներդրման բաժնի տեսուչ,
ոստիկանության
ավագ լեյտենանտ
Անի Դուկասյանը**

ՄԱՅՐՈՒԹՅՈՒՆ՝ ԿՆՈՋԸ ԿԵՐԱՅՆՈՂ ՇՆՈՐՀ

Աշխարհում կա ամենից սքանչելի մի եսկ, որին մշտապես պարտք ենք. դա մայրն է *Նիկոլայ Օստրովսկի*

Մեր ազգային նկարագիրը ձևավորող անկյունաքարերից մեկը եղել է միշտ կլի-նի հայ ընտանիքներում մոր հանդեպ տածած անսահման սերն ու նվիրվածությունը: Հայ կինը, իր առաքինի իմաստությամբ, դարերով ձևավորված ավանդույթների և ազգային արժեքների պահպանման առաքելությամբ, մշտապես անգնահատելի դեր է ունեցել ընտանիքներում և ընդհանրապես հասարակության կյանքում:



Ապրիլի 7-ին մեր եկեղեցիներում կատարվում է մայրության բերկրանքի սպասող կանանց օրհնության արարողակարգը. ինչը պայմանավորված է սուրբ կույս Մարիամի խորին խոնարհությամբ, ով հնազանդվեց Աստծու կամքին. լույս աշխարհ բերեց Հիսուս Քրիստոսին՝ մարդկության համար բացելով մոր կյանքի արշալույսը: Այս մեծագույն իրողության հիշատակը հավերժացրեց եկեղեցին՝ հաստատելով Աստվածամոր ավետման գեղեցիկ տոնը:

Երեխաներն առավել հանգիստ ու ապահով են զգում իրենց մայրերի գրկում, մարդիկ էլ՝ իրենց Մայր հայրենիքում: Դրա համար էլ հայրենիքը կոչում ենք Մայր հայրենիք, մեր եկեղեցին կոչում ենք Մայր եկեղեցի, լեզուն՝ մայրենի, երկրի կարևորագույն քաղաքը կոչում ենք մայրաքաղաք:

Ապրիլի 7-ը հռչակված է մայրության և գեղեցկության տոն և մեզ հիշեցնում է նաև այն անպաշտպան կանանց մասին, ովքեր լռությամբ կրում են սոցիալական ու հոգեբանական ծանրագույն խնդիրներ: Հիշեցնում է այն մայրերի մասին, ովքեր միայնակ են մեծացնում իրենց երեխաներին՝ ամենօրյա հերոսությամբ հաղթահարելով հասարակական, հոգեբանական ու տնտեսական ամեն դժվարություն, և այն հերոսուհիների մասին, ովքեր զենքը ձեռքին պայքարել են՝ համուն մեր մոր հայրենիքի կերտման:

Ապրիլի 7-ն ունի նաև յուրահատուկ խորհուրդ, քանի որ այդ օրն առանձնահատուկ մեծարանքի ենք արժանացնում մայրությանն ու մայրության հարատևող գեղեցկությանը՝ որպես կյանքի ու երջանկության անսպառ աղբյուր: Եվ այս տարի, չնայած մեր երկրում տիրող համաճարակային իրավիճակին, երբ բոլորն ստիպված մեկուսացված են իրենց բնակարաններում, ոչինչ չխանգարեց շնորհավորել ու մեծարել սիրելի կանանց, մայրերին այս գարնանային հիասքանչ տոնի առթիվ՝ մարդե-լով նրանց անսահման սեր, երջանկություն, առողջություն: Թող գարուն-եթերն ու ժպիտները նրանց կյանքում լինեն անսպառ ու անհաշվելի, իսկ նրանց հոգատարությունը, սերը, ողջախոհությունն ու նվիրումը՝ մեր մշտական ուղեկիցը:

Աննա Սարուխանյան
Նոստիկանության կապիտան

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱԿԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ



Ապրում ենք արտակարգ, արտասովոր, նախկինում մեր սերնդի հետ տեղի չունեցած իրավիճակում: Իհարկե, դասականներից տեղյակ ենք և լսել ենք ժամտախտի և տարատեսակ համաճարակների մասին, բայց որ 21-րդ դարում նման իրականության ակամատեսը կլինեինք՝ քչերի մտքով կանցնենք: Ակամայից հիշում ենք Գարսիա Մարկեսի «100 տարվա մե-նություն» վեպը, որտեղ 4 տարի, 11 ամիս և 2 օր անձրև տեղաց, և այդ ողջ ընթացքում Մակոնդոյի բնակիչները տնից գրեթե դուրս չէկան: Փողոցներն այնքան էին լցվել ջրով, և օդն այնքան էր հագեցվել խոնավությամբ, որ ձկները դռներից ու պատուհաններից լցվում էին տները:

Համավարակի այս օրերին լավ են հասկանում Մակոնդոյի բնակիչներին, որոնք հույսով սպասում էին, որ մի օր անձրևը կդադարի, և իրենք վերջապես դուրս կգան տնից: մենք էլ ենք անհամբեր սպասում, որ այս ամենն անպայման մի օր կավարտվի, և բոլորս կանցնենք մեր բնականոն կյանքին ու գործունեությանը:

Իսկ ի՞նչ հետևություններ արեցինք այս օրերին, ի՞նչ զգաց-ցինք, ի՞նչ հասկացանք, ի՞նչ սովորեցինք, ի՞նչը գնահատեցինք և ի՞նչը նկատեցինք, որ մինչ այս չէինք նկատում, և վերջապես, ի՞նչ եզրակացություն արեցինք: Հավանաբար, ամենակարևոր բանը, որ զգացինք, մարդկային անմիջական շփման անհրաժեշտությունն է:

Հասկացանք, որ այն, ինչը

սովորական երևույթ էր մեր կյանքում՝ աշխատանքի գնալ, քաղաքում զբոսնել, ընկերների հետ ժամանակ անցկացնել, գնումներ կատարել, սպորտա-յին ակումբներ և տարբեր սպասարկման սրահներ հաճախել, որևէ երկիր մեկնել..., մեծ ճոխություն է եղել, և մենք դա ընկալել ենք որպես սովորական երևույթ. այդպես էլ պետք է լի-նենք: Եվ սկսեցինք ավելի արժևորել մեր ունեցածը, նկատեցինք, որ շատ ենք կարոտում մեր հարազատներին, ընկերներին, մեր աշխատավայրը, սովորողներին, նաև այն մարդկանց, որ տարիներ շարունակ սպասարկել են մեզ տարբեր ոլորտներում, որոնց մենք այնքան ընտելացել էինք, և դա մոր ենք նկատում: Հասկացանք, որ շատ սիրում ենք բոլորին, և առանց նրանց՝ մեր կյանքը միօրինակ և անհետաքրքիր է: Սկսեցինք գնահատել այն, ինչ ունենք, և դա, իհարկե, նյութական չէ: Սկսվեցին հեռավար դասերը, և տարօրինակ կերպով կապվե-

ցինք համացանցային աշխարհին: Հիացանք մեր գործընկերների մտքի ճկունությամբ և այս իրավիճակից ելքը գտնելու նրանց տարատեսակ հնարքներով, նրանց արիեստավարժու-թյամբ: Չվարճացանք համացանցում տեղադրված հեռավար դասերի վերաբերյալ հու-մորային տեսանյութերով: Սկսեցինք ավելի շատ սիրել ու կապ-վել մեր սովորողներին: Մտա-հոգվեցինք նրանց անվտանգ-ությունը և առողջությամբ: Ան-համբեր սպասեցինք նրանց հարցերին ու տնային աշխա-տանքներին: Արագ արձագան-քեցինք, ստուգեցինք, ուղղե-ցինք ու ուղարկեցինք օրվա ցանկացած ժամի:

Եվ քանի որ մայիսը հաղթա-նակների ամիս է, ուստի հուսով ենք այժմ էլ հերթական հաղթա-նակ ենք տոնելու և նորովի ենք գնահատելու կյանքը ու այն ավելի ենք սիրելու:

Անի Հայրապետյան
Լեզուների ամբիոնի պետ,
Նոստիկանության գեղապետ



ՍՈՒՐԵ ՀԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՏ ԶԱՏԿԻ ՏԱՂԱՎԱՐ ՏՈՆ

Գարնան և Քրիստոսի Հարության տոնը կոչ-վում է Ջատիկ: «Ջատիկ» նշանակում է ան-ցուն չարչարանքներից, գատվել, հեռանալ զազիր, անմաքուր ու դժմոք խորհուրդներից և դառնալ բարու գործակից:

Ջատիկը կան Քրիստոսի Հրաշափառ Հարու-թյան տոնն ամբողջ աշխարհի հավատացյալ քրիս-տոնյաների կարևոր տոներից մեկն է: Հատկանշա-կան է, որ այդ օրը խորհրդանշում է նաև գարնան գալուստը, բնության զարթոնքը, այդ իսկ պատճա-ռով այն տոնում են նաև ոչ հավատացյալ մարդիկ:

Ս. Ջատիկն սկիզբ է առել հրեաների Պասեք տո-նից, որի ժամանակ, ըստ քրիստոնեական դավա-նանքի, 1-ին դարում (ստույգ թվականը վիճելի է՝ 27-33թթ. միջև ընկած ժամանակաշրջանում) Երուսա-ղեմում խաչվել և հարություն է առել Հիսուս Քրիս-տոսը: Պասեքը հրեաները ինչպես նախկինում, այն-պես էլ այսօր, տոնում են ի նշան եգիպտական գե-րությունից ազատագրման և մասնավորապես Հին Կտակարանում նկարագրվող այն դրվագի, երբ Աստված նոխազի արյան միջոցով գատեց իր ժո-ղովրդին եգիպտացիների վրա ուղարկված արե-տից՝ անդրանիկ զավակների կոտորածից: Համա-

ձայն քրիստոնեական ուսմունքի՝ այդ իրադարձու-թյունը նախանշան էր Հիսուս Քրիստոսի (Գառն Աստծո) կանովին մահվան ընդունման և իր արյան հեղման համուն մարդկության փրկության:

Ջատիկը Հայ առաքելական սուրբ եկեղեցու 5 տաղավար տոներից մեկն է, որը շարժական տոն է, այսինքն՝ յուրաքանչյուր տարի նրա նշման օրը փոխվում է: Հայ առաքելական եկեղեցին այն նշում է գարնան գիշերհավասարին հաջորդող լուսնի լո-ման առաջին կիրակի օրը, որն ընկնում է մարտի 22-ից հետո, մինչև ապրիլի 26-ը (35 օր) ժամանա-կահատվածում:

Ջատիկն առնչվող գլխավոր արարողություն-ներն սկսվում են Ավագ շաբաթվա շաբաթ օրը և ավարտվում երկուշաբթի: Շաբաթ երեկոյան մա-տուցվում է Քրիստոսի հարության ճրագալույցի պատարագ, որով վերջանում է Ջատիկի նախոր-դած յոթ շաբաթ տևած Մեծ Պատի շրջանը: Պատա-րագի ավարտին հավատացյալները միմյանց ող-ջունում են «Քրիստոս հարյալ ի մեռելոց» ավետի-տով և ստանում «Օրհնյալ է հարությունը Քրիստո-սի» պատասխանը:

Ժամերգություն է տեղի ունենում և Պատարագ մատուցվում բուն գատկական կիրակի օրը:

Ջատիկ տոնին հավատացյալները ծու են ներ-կույն: Ներկված ծուն համարվում է Հարության և նոր կյանքի խորհրդանշ: Կարմիր խորհրդանշում է խաչյալ Հիսուսի կենդանարար արյունը, որ թափ-վեց մարդկության փրկության համար: Ըստ ս. Գրի-գոր Տաթևացու՝ «Միայն Ջատիկն ենք ծու ներկում, որովհետև ծուն օրինակ է աշխարհի, և ինչպես իմաստուններն են ասում. «Դրսի կեղևը նման է

երկնքին, թաղանթը՝ օդին, սպիտակուցը՝ ջրին, դեղ-ուցն էլ երկիրն է: Իսկ կարմիր գույնը խորհրդան-շում է Քրիստոսի արյունը: Եվ մենք, կարմիր ծուն մեր ձեռքերի մեջ առնելով, հռչակում ենք մեր փրկությունը»:

Ջատիկ տոնի հիմնական կերակուրներն են նաև ձկնեղենը, փլավը, ձվով տապակած բանջարեղենը:

Ձուն գատկական տոնում գրավում է ամենա-կարևոր տեղը, քանի որ ամմիջակամորեն առնչ-վում է տոնի ծիսական գաղափարախոսությանը: Հայոց ավանդական կենցաղում ծուն համարվել է գարնան և պտղաբերության, ինչպես նաև հարու-թյան խորհրդանշը, քանզի իր մեջ պարունակում էր վերածննդի խորհուրդը, իսկ ձվախաղի իմաստը հինը տապալելու և նորին անցնելու գաղափարն ունի:

Սուրբ Ջատիկը կան Հիսուս Քրիստոսի հրաշա-փառ Հարության տոնն այս տարի՝ նշվեց ապրիլի 12-ին:

Թեև մեկուսացած, առանց կենդանի շփման, հե-ռուստացույցով, բայց բոլորս մասնակցեցինք պա-տարագին, հեռակա կարգով՝ հեռախոսով, միմյանց շնորհավորեցինք, և քանի որ այն ընտանեկան տոն է, այս տարի յուրաքանչյուր ընտանիք, հային բնո-րոշ հյուրասիրությունն իր մեջ դժվարությամբ խեղ-դելով, առանձնացավ իր նեղ ընտանեկան սեղանի շուրջ ու կարմիր գինով շնորհավորեց Ս. Ջատիկը Աստծուց խնդրելով ուժ ու համբերություն տալ հա-մայն մարդկությանը՝ այս անսելի արհավիրքից շուտափույթ ազատվելու համար:

Աստված բոլորիդ պահապան:

ՄՏԵՂԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՄԵՐՈՆԸ

Հորս

Իմ հայր, քեզնից ավելի թանկ Այս աշխարհում չկա ոչինչ, խրատներից քո՝ ճիշտ, շիտակ, խորհուրդներից՝ խիստ ու հստակ, Ավելի թանկ չկա ոչինչ: Իմ հայր անպարտ, իմ հայր հպարտ, Եությունս՝ քեզ հետ կապված, Գոյությունս՝ կախված քեզնից: Դու ողջ կյանքում, քեզ մոռացած, Չգոհացած այս աշխարհից, Իմ ես տվել հնարավոր, Հաճախ նաև անհնարին Ամեն բանն իմ երազած: Քո էությանդ դու պահանջկոտ, Հաճախ նաև խստապահանջ Հիմքն ես դրել իմ էության, Կերտել էՍ-ը՝ իմ երազկոտ, Ու այն կապել քեզ հետ այնպես, Ինչպես ունեն օդի պահանջ: Իմ հայր, կյանքի իմ ուսուցիչ, Դու իմացիր, որ առանց քեզ Ես կդառնամ մի՛ մեծ «ոչինչ»:

ՀՀ Նոստիկանության
կրթահամալիրի շրջանավարտ
Գրետա Ալեքսանյան